



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԹԵՅՄՈՒՐԱԶՅԱՆՆ ԸՆԴԴԵՄՀԱՅԱՍԱՆԻ

(Գանգապ թիվ 17521/09)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

15 մարտի 2018թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Թեյմուրազյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos]՝ *Նախագահ,*

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Թիմ Այքը [Tim Eicke]՝ *դատավորներ,*

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2018 թվականի փետրվարի 20-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի
պրն Վարդան Թեյմուրազյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի
Հանրապետության՝ 2009 թվականի մարտի 23-ին Դատարան ներկայացված
գանգատի (թիվ 17521/09) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեսնում գործող իրավաբան
տկն Ա. Մելքոնյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ Հայաստանի օրենսդրության համաձայն՝ իրեն հասանելի չի եղել ոչ նյութական վնասների դիմաց որեւէ փոխհատուցում՝ իր հանդեպ վատ վերաբերմունքի եւ իրեն ազատությունից ապօրինի զրկելու մասով:

4. 2011 թվականի նոյեմբերի 17-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն: 2016 թվականի մարտի 15-ին Պալատը, որին հանձնվել էր գործը, որոշել է կողմերից պահանջել լրացուցիչ տեղեկություններ՝ գանգատի ընդունելիության եւ գործի հանգամանքների վերաբերյալ:

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1957 թվականին եւ ապրում է Երեւանում:

Ա. Դիմումատուի՝ քրեական գործով երկու դատապարտումները եւ դրանցով վարույթների հետագա վերսկսումը

6. 1983 եւ 1988 թվականներին դիմումատուն մեղավոր է ճանաչվել անչափահասների նկատմամբ ոտնձգություններ կատարելու համար եւ դատապարտվել ազատազրկման:

7. 2001 թվականի հունվարի 25-ին Վճռաբեկ դատարանը բավարարել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացված լրացուցիչ բողոքը, բեկանել է երկու դատավճիռները եւ կարճել դիմումատուի դեմ հարուցված երկու քրեական վարույթները՝ հանցակազմի բացակայության հիմքով: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ

դիմումատուի կողմից նրան վերագրվող հանցանքների կատարումը հաստատող որեւէ ապացույց չկա, եւ որ դատարանի դատավճիռները հիմնված են եղել ենթադրությունների եւ օրենքի սխալ մեկնաբանման վրա:

8. 2001 թվականից ի վեր դիմումատուն պետության դեմ ներկայացրել է երկու քաղաքացիական հայց՝ իր երկու դատապարտումների հետեւանքով կրած նյութական վնասի դիմաց փոխհատուցում ստանալու պահանջով: Այս հայցերը բավարարվել են 2001 թվականի սեպտեմբերի 10-ին եւ 2005 թվականի օգոստոսի 26-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի կողմից, որը որոշել է դիմումատուին՝ որպես արդարացվածի, տրամադրել գումարներ որպես փոխհատուցում՝ բաց թողնված եկամտի, իր վնասված առողջության վերականգնման համար կրած բժշկական ծախսերի դիմաց, իր հետագա բուժումն արտասահմանում կազմակերպելու եւ այդ առնչությամբ առաջացող ճանապարհածախսի համար:

Բ. Դիմումատուի դեմ ներկայացված նոր մեղադրանքները եւ նրա արդարացումը

9. 2005 թվականի ապրիլի 13-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության քննիչ Ն.-ն, Քրեական օրենսգրքի (ՔՕ) 316-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հարուցել է քրեական գործ դիմումատուի նկատմամբ, ով կասկածվում էր երթեւեկության կանոնների խախտման պատճառով դիմումատուի ավտոմեքենան կանգնեցրած ճանապարհային ոստիկանության երկու ծառայողների՝ Վ.Ս.-ի եւ Գ.Գ.-ի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ:

10. Նույն օրը դիմումատուն ձերբակալվել է, իսկ երկու օր անց նրան նույն հոդվածով մեղադրանք է առաջադրվել երկու ճանապարհային ոստիկանների նկատմամբ բռնություն գործադրելու համար:

11. 2005 թվականի ապրիլի 16-ին որոշվել է չկալանավորել դիմումատուին եւ բաց թողնել նրան՝ չհեռանալու մասին ստորագրությամբ այն հիմքով, որ նա մի քանի հիվանդություններով տառապող՝ հաշմանդամություն ունեցող անձ էր, նախկինում չէր դատվել եւ իր խնամքի տակ ուներ երկու անչափահաս երեխա, կին ու մայր, ինչպես նաեւ ուներ մշտական բնակության վայր:

12. Չպարզված ամսաթվին ոստիկանության երկու ծառայողները քրեական գործով ճանաչվել են տուժող:

13. 2005 թվականի մայիսի 5-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը, քննիչի միջնորդության հիման վրա, դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված՝ չհեռանալու մասին ստորագրությունը փոխարինել է երկամսյա ժամկետով նախնական կալանքով: Դիմումատուն այդ որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ քրեական դատարանի կողմից մերժվել է 2005 թվականի հունիսի 2-ին:

14. Քննության ընթացքում դիմումատուն ցուցմունք է տվել այն մասին, որ Վ.Ս.-ն եւ Գ.Գ.-ն իրենից պահանջել են կաշառք՝ երթելության կանոնների խախտումը չարձանագրելու համար, իսկ երբ նա մերժել է, նրան ենթարկել են ծեծի: Դիմումատուի նկատմամբ անցկացվել է դատաբժշկական փորձաքննություն, որից պարզվել է, որ նա ստացել է վնասվածքներ, այդ թվում՝ կոնտուզիա եւ այտոսկրի կոտրվածք:

15. 2005 թվականի հունիսի 10-ին դիմումատուի իրավաբանը գրություն է ուղարկել քննիչին՝ պնդելով, որ դիմումատուն է բռնության ենթարկվել Վ.Ս.-ի եւ Գ.Գ.-ի կողմից, այլ ոչ թե հակառակը: Ուստի այն որակումը, որ դիմումատուի գործողություններն ընդգրկված են ՔՕ 316-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում, սխալ է, իսկ ոստիկանության ծառայողներին որեւէ մեղադրանք չի առաջադրվել: Իրավաբանը պահանջել է, որ քննիչն առաջադրի նման մեղադրանք:

16. 2005 թվականի հունիսի 20-ին վարչական շրջանի դատախազը նախկինում բերված միեւնույն հիմքերով որոշել է դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված նախնական կալանքը փոխարինել չհեռանալու մասին ստորագրությամբ (տե՛ս վերելում՝ 11-րդ պարբերությունը):

17. 2005 թվականի հունիսի 21-ին քննիչ Ն.-ն, վերանայելով դիմումատուի դեմ քրեական գործի նյութերը, որոշում է ընդունել այդ քրեական գործի մասը կարճելու եւ Վ.Ս.-ի ու Գ.Գ.-ի կողմից դիմումատուին վնասվածքներ հասցնելու մասով քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Քննիչը պարզել է, որ ճանապարհային ոստիկանության ծառայողները դիմումատուին վնասվածքներ են պատճառել, քանի որ փորձել են ձերբակալության ժամանակ հաղթահարել նրա դիմադրությունը, ուստի նրանց գործողությունները հանդիսացել են ուժի իրավաչափ կիրառում:

18. 2006 թվականի փետրվարի 16-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանն արդարացրել է դիմումատուին՝ գտնելով, որ նա մեղավոր չէ իրեն վերագրվող հանցանքի կատարման մեջ: Վարչական շրջանի դատարանը նաեւ վճռել է, որ ոստիկանության ծառայողներ Վ.Ս.-ն եւ Գ.Գ.-ն անցել են իրենց լիազորությունները՝ բռնություն գործադրելով դիմումատուի նկատմամբ, ինչը լուրջ վնաս է պատճառել դիմումատուին եւ իր ընտանիքին ու լուրջ հետեւանքներ առաջացրել նրանց համար: Մասնավորապես, դիմումատուն ապօրինաբար բերման է ենթարկվել ոստիկանության բաժանմունք եւ ձերբակալվել ճանապարհային ոստիկանության ծառայողներ Վ.Ս.-ի եւ Գ.Գ.-ի կողմից տրամադրված կեղծ տեղեկությունների հիման վրա: Ոստիկանության ծառայողները դիմումատուին ծեծի են ենթարկել, ինչի հետեւանքով վերջինս ստացել է վնասվածքներ, այդ թվում՝ կոնտուզիա եւ այտուցի կոտրվածք: Ավելին, նրանք դիմումատուին բռնի կերպով նստեցրել են ոստիկանության ավտոմեքենան եւ տարել նրան ոստիկանության բաժանմունք՝ ճանապարհի՝ երթելեկության արտաքին գոտու վրա թողնելով դիմումատուի ավտոմեքենան, որում գտնվում էր նրա ութամյա որդին: Արդյունքում դիմումատուի որդին ստացել է

հոգեբանական տրավմա, եւ նրա առողջությանը վնաս է հասցվել: Չնայած այն փաստին, որ դիմումատուն չէր խախտել [իր նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված] չհեռանալու մասին ստորագրության պայմանները, եւ որ նա հաշմանդամություն ունեցող անձ էր եւ իր խնամքի տակ ուներ երկու անչափահաս երեխա՝ քննիչը դիմել էր դատարան՝ նրան կալանավորելու վերաբերյալ չհիմնավորված միջնորդությամբ: Արդյունքում դիմումատուն կալանքի տակ էր եղել 2005 թվականի մայիսի 5-ից մինչեւ հունիսի 20-ը: Ավելին, 2005 թվականի հունիսի 20-ին նրան ստորագրությամբ բաց թողնելու հիմքերն այն նույն հիմքերն էին, որոնք օգտագործվել էին 2005 թվականի ապրիլի 16-ին՝ հիմնավորելու համար նրան ստորագրությամբ բաց թողնելը՝ նախնական կալանքի փոխարեն: Վարչական շրջանի դատարանն ի վերջո գտել է, որ քննիչն ընդունել է ոստիկանության ծառայողների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու անհիմն որոշում՝ գնահատելով նրանց գործողությունները որպես օրինական, եւ, հղում կատարելով Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 184-րդ հոդվածին, դիմել է գլխավոր դատախազին, որպեսզի վերջինս նրանց դեմ քրեական վարույթ հարուցի ՔՕ 309-րդ հոդվածի 3-րդ մասով՝ լիազորություններն անցնելու համար, որն առաջացրել է ծանր հետեւանքներ:

19. Չպարզված ամսաթվերին դատախազությունը եւ ծառայողներ Վ.Ս.-ն եւ Գ.Գ.-ն այդ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել:

20. 2006 թվականի նոյեմբերի 14-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է բողոքները եւ անփոփոխ թողել Վարչական շրջանի դատարանի դատավճիռը՝ գտնելով, որ դիմումատուն գործել է անհրաժեշտ պաշտպանության իրավիճակում: Սակայն այն որոշել է չեղարկել գլխավոր դատախազին ուղղված դիմումն այն հիմքով, որ ՔԴՕ 21-րդ հոդվածն արգելում է վերսկսել վարույթը, եթե առկա է քրեական հետապնդման մարմնի կողմից ընդունված՝ վարույթի կարճման կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: 2005 թվականի հունիսի 21-ին քննիչը Վ.Ս.-ի եւ Գ.Գ.-ի առնչությամբ կայացրել է նման որոշում, որը երբեւիցե չեղյալ չի ճանաչվել, ուստի 21-րդ հոդվածը բացառել է նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը:

21. 2007 թվականի մայիսի 15-ին Վճռաբեկ դատարանը հիմքերի բացակայության պատճառով անընդունելի է ճանաչել ոստիկանության ծառայողներ Վ.Ս.-ի եւ Գ.Գ.-ի բողոքն այդ դատավճռի դեմ:

Գ. Դիմումատուի բողոքը քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշման դեմ

22. 2007 թվականի նոյեմբերի 27-ին դիմումատուն բողոք է ներկայացրել դատարաններ՝ փորձելով չեղյալ ճանաչել քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշումը, քանի որ այն հակասում էր դատարանների այն եզրահանգումներին, որոնք արվել էին նրա գործով դատական քննության ընթացքում՝ ոստիկանության ծառայողների գործողությունները գնահատելիս:

23. Վարչական շրջանի դատախազը պնդել է, որ դիմումատուի բողոքը պետք է մերժվի, քանի որ նա բաց է թողել ՔԴՕ 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետը: Ի պատասխան՝ դիմումատուն պնդել է, որ, համաձայն ՔԴՕ 21-րդ հոդվածի 5-րդ մասի, այդ հոդվածում նշված ժամկետները չեն գործում նոր երեւան եկած հանգամանքների պարագայում, ինչն իր դեպքում իր քրեական գործի շրջանակներում կայացված դատավճիռներն էին: Բացի այդ, քրեական հետապնդման մարմինը օրենքով պարտավոր է եղել իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել նրա իրավունքները վերականգնելու համար:

24. 2008 թվականի մարտի 25-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը որոշել է մերժել բողոքը՝ գտնելով, որ վարչական շրջանի դատախազի՝ ՔԴՕ 21-րդ հոդվածի վերաբերյալ փաստարկները ճիշտ են: Այն նաեւ նշել է, որ վարչական շրջանի դատախազությունը չի կարող պատասխանատվություն կրել դիմումատուի կողմից քննիչի որոշումը պատշաճ ժամկետում չվիճարկվելու համար:

25. Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ:

26. 2008 թվականի մայիսի 19-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ ՔԴՕ 21-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառելի չէ նրա գործի շրջանակներում, եւ վճռելով, որ դիմումատուն չի վիճարկել քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշումը ՔԴՕ 21-րդ եւ 290-րդ հոդվածներով, ինչպես նաեւ գործը վերսկսելու պահանջ ներկայացնելու համար 426-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում: Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա էր բողոքարկման այն կայացնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

27. 2009 թվականի մարտի 16-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարանի որոշման դեմ, ինչպես նաեւ խնդրել, որ բողոքարկման բաց թողնված մեկամսյա ժամկետը վերականգնվի:

28. 2009 թվականի ապրիլի 8-ին Վճռաբեկ դատարանը գտել է, որ դիմումատուն չի ապացուցել, որ ունեցել է հիմնավոր պատճառներ՝ սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու համար, եւ որոշել է մերժել դիմումատուի վճռաբեկ բողոքի քննությունը:

Դ. Դիմումատուի՝ նյութական վնասների եւ ոչ նյութական վնասների փոխհատուցման մասով քաղաքացիական հայցերը

1. Առաջին քաղաքացիական հայցը

29. 2007 թվականի սեպտեմբերի 11-ին դիմումատուն պետության դեմ ներկայացրել է քաղաքացիական հայց՝ նյութական վնասի լրացուցիչ փոխհատուցման, մասնավորապես՝ եկամուտը բաց թողնելու եւ իր նախորդ երկու անարդար դատապարտումների մասով ոչ նյութական վնասի փոխհատուցման համար՝ 15 078 664 ԱՄՆ դոլարի չափով, իսկ իր անօրինական ձերբակալման եւ կալանքի ու իրեն մարմնական վնասվածք հասցնելու համար՝ 1 000 000 եվրոյի չափով:

30. 2007 թվականի նոյեմբերի 26-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը որոշել է մերժել նրա հայցերը: Այն ի սկզբանե նշել է, որ դիմումատուն ՔԴՕ 66-րդ հոդվածի իմաստով «արդարացված անձ» է, եւ նույն հոդվածի համաձայն իրավունք ունի պահանջելու իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման հետեւանքով պատճառված գույքային վնասի հատուցում: Սակայն դիմումատուի կողմից պահանջվող փոխհատուցման տեսակները նախատեսված չէին ՔԴՕ 66-րդ հոդվածի 4-րդ մասով՝ բացառությամբ բաց թողնված եկամտի համար պահանջվող փոխհատուցման, որը դիմումատուն չի հիմնավորել:

31. 2007 թվականի նոյեմբերի 28-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

32. 2008 թվականի մարտի 7-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը եւ անփոփոխ թողել Վարչական շրջանի դատարանի վճիռը՝ գտնելով, որ դիմումատուին արդեն տրամադրվել է փոխհատուցում իր դատապարտումների հետ կապված նյութական վնասի դիմաց, իսկ գույքային հատուցումների մասով նրա նոր պահանջները հիմնավոր չէին: Ինչ վերաբերում է ոչ գույքային վնասի հատուցման պահանջին, այն մերժվել է այն հիմքով, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում փոխհատուցում ոչ նյութական վնասի դիմաց:

33. 2008 թվականի հուլիսի 29-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը 2008 թվականի հոկտեմբերի 28-ին Վճռաբեկ դատարանի կողմից ճանաչվել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

2. Երկրորդ քաղաքացիական հայցը

34. 2009 թվականի փետրվարի 26-ին դիմումատուն ներկայացրել է մեկ այլ քաղաքացիական հայց պետության դեմ՝ պահանջելով փոխհատուցում իր հանդեպ վատ վերաբերմունքի արդյունքում կրած այնպիսի նյութական վնասների դիմաց, ինչպիսիք են տարբեր բժշկական ծախսերը:

35. 2011 թվականի դեկտեմբերի 26-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը քննել է դիմումատուի հայցը: Դիմումատուի քրեական գործով կայացված դատավճիռներին եւ Քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածին հղում կատարելով՝ այն ի սկզբանե վճռել է, որ դիմումատուն ծանրակշիռ փաստարկներ ունի Քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի մասով՝ հաշվի առնելով այն փաստը, որ ոստիկանության ծառայողների գործողություններն ապօրինի են եղել այդ հոդվածի իմաստով: Վարչական շրջանի դատարանն այնուհետեւ եզրակացրել է, որ ոստիկանության ծառայողների ապօրինի գործողությունների եւ դիմումատուի կողմից պահանջվող նշված բժշկական ծախսերի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ չկա, եւ որոշել է մերժել հայցը:

36. 2012 թվականի հունվարի 25-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

37. 2012 թվականի հոկտեմբերի 4-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը եւ անփոփոխ թողել Վարչական շրջանի դատարանի վճիռը:

38. 2012 թվականի նոյեմբերի 2-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը 2012 թվականի նոյեմբերի 28-ին Վճռաբեկ դատարանի կողմից ճանաչվել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական դատավարության օրենսգիրք

39. 2005 թվականի հունիսի 21-ին գործող 21-րդ հոդվածը, որը վերնագրված է «Կրկնակի դատապարտման [...] անթույլատրելիությունը», արգելում էր կրկնակի պատիժը նույն անձի հանդեպ նույն արարքի համար: 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ քրեական հետապնդման մարմնի կողմից գործի վարույթի կարճման կամ քրեական հետապնդումը դադարեցնելու

մասին որոշումը կարող է վերացնել միայն գլխավոր դատախազը՝ այդպիսի որոշում կայացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

40. 2008 թվականին գործող 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում էր, որ քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման, բացառությամբ 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: 21-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում էր, որ սույն կանոնը չի գործում նոր երեւան եկած հանգամանքների պարագայում:

41. 32-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական գործով վարույթն ավարտվում է [քրեական գործով] վարույթը կարճելու մասին որոշում կամ վերջնական դատական ակտ կայացնելով:

42. 33-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն հարուցված քրեական գործով:

43. Տվյալ ժամանակահատվածում գործող 66-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում էր, որ արդարացվածն իրավունք ունի նաեւ պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման հետեւանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները: 66-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ արդարացվածը որպես հատուցում իրավունք ունի ստանալու՝ ա) աշխատավարձը, թոշակը, նպաստները եւ այլ եկամուտներ. բ) գույքի բռնագրավման, առգրավման կամ գույքի վրա կալանք դնելու հետեւանքով պատճառված վնասը. գ) դատական ծախսերը. դ) փաստաբանին վճարված գումարները. եւ ղ) դատավճիռն ի կատար ածելիս վճարված տուգանքը:

44. 175-րդ հոդվածով նախատեսվում է, որ օրենսգրքով նախատեսված առիթների եւ հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել: 176-րդ հոդվածով նախատեսվում է, որ քրեական գործ հարուցելու առիթները, *inter alia* (*ի թիվս այլնի*), ներառում են հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի կամ դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի եւ հետեւանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

45. 184-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու եւ այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, իսկ դատարանը նման որոշում կայացնելու միջնորդությամբ դիմում է դատախազին, եթե մեղադրյալին վերագրվող հանցագործությունից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության:

46. 2005 թվականի հունիսի 21-ին գործող 263-րդ հոդվածով նախատեսվում էր, որ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաեւ այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվելը կարող է բողոքարկվել դատարան:

47. 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական

գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների եւ գործողությունների օրինական եւ հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները եւ օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով եւ գործողություններով, եւ եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: 290-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ նույն անձինք իրավունք ունեն նաեւ դատարան բողոքարկելու հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի եւ դատախազի հրաժարվելը, ինչպես նաեւ քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ օրենսգրքով նախատեսված դեպքերում: 290-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է, որ բողոքը կարող է ներկայացվել դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

Բ. Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը

48. 52-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է, որ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը [քաղաքացիական գործով] պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ եւ դրանք կատարած անձինք:

Գ. Քրեական օրենսգիրք

49. 309-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ էական վնաս են

պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետեւանքներ, պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

50. 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Դ. Քաղաքացիական օրենսգիրք

51. 17-րդ հոդվածով նախատեսվում է, որ ցանկացած անձ, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների հատուցում: Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաեւ չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

52. 1063-րդ հոդվածով նախատեսվում է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ) պատճառված վնասը հատուցում է պետությունը կամ համապատասխան համայնքը:

53. 1064-րդ հոդվածով նախատեսվում է, որ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու կամ վարչական տույժի ենթարկելու հետեւանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է պետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության եւ դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

54. Դիմումատուն բողոքել է, որ նա ենթարկվել է վատ վերաբերմունքի, եւ որ մարմինները չեն իրականացրել արդյունավետ քննություն այս փաստով: Նա հիմնվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

55. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները եւ չի դիմել Դատարան՝ վերջնական որոշման կայացման ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մասնավորապես, դիմումատուն չի ներկայացրել բողոք քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշման դեմ, մինչդեռ նման հնարավորությունը սահմանված էր ՔԴՕ 263-րդ եւ 290-րդ հոդվածներով, եւ կարող էր փոխհատուցում տրամադրվել 3-րդ հոդվածով ներկայացված իր բողոքի մասով: Սակայն, նույնիսկ ենթադրելով, որ բողոքարկման այս ընթացակարգերն արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ չէին, դիմումատուն պետք է այդ դեպքում Դատարան դիմեր քննիչի որոշման օրվանից վեց ամսվա ընթացքում, ինչը նա չի արել: Ինչ վերաբերում է 2007 թվականի սեպտեմբերի 11-ին եւ 2009 թվականի

փետրվարի 26-ին դիմումատուի կողմից ներկայացված քաղաքացիական հայցերին, հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուն չէր բողոքարկել քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշումը, համաձայն որի՝ ոստիկանության ծառայողների գործողությունները համարվել էին հիմնավորված, դիմումատուի հանդեպ ենթադրյալ վատ վերաբերմունքի փաստը երբեք չի հաստատվել: Նա տուժող չի ճանաչվել եւ կորցրել է Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման իրավունքը: Հետեւաբար դիմումատուի քաղաքացիական հայցերը չեն ունեցել հաջողության հասնելու հեռանկար եւ ուստի չեն եղել արդյունավետ պաշտպանության միջոցներ:

56. Դիմումատուն պնդել է, որ նա պահպանել է ինչպես [իրավական պաշտպանության ներպետական միջոցների] սպառման, այնպես էլ վեց ամսվա կանոնները: Մասնավորապես, համաձայն քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշման՝ նրա հանդեպ վատ վերաբերմունքի փաստը հաստատվել է նրա քրեական գործով ընդունված վերջնական եւ պարտադիր դատավճիռներով, որոնք իրականում չեղյալ են ճանաչել այդ որոշումը: Նման հանգամանքներում նրանից չի պահանջվել բողոք ներկայացնել, եւ դատախազը ստիպված է եղել, համաձայն ՔԴՕ 175-րդ եւ 176-րդ հոդվածների, քրեական գործ հարուցել ոստիկանության ծառայողների դեմ: Այնուհետեւ քննչական մարմինների անգործության պատճառով 2007 թվականի նոյեմբերի 27-ին նա բողոք է ներկայացրել դատարան՝ պահանջելով քրեական գործ հարուցել վերջնական դատավճիռների հիման վրա եւ պատասխանատվության ենթարկել իրականացնողներին: Այդ վարույթներով վերջնական որոշումը կայացվել է Վճռաբեկ դատարանի կողմից 2009 թվականի ապրիլի 8-ին: Այսպիսով, նա բավարարել է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Ինչ վերաբերում է նրա քաղաքացիական հայցերին, ապա տվյալ ժամանակահատվածում գործող ՀՀ օրենսդրությունը որեւէ պարագայում չէր նախատեսում փոխհատուցում ոչ նյութական վնասի դիմաց: Ուստի սխալ էր կապել փոխհատուցման հավակնելու նրա իրավունքն այն փաստի հետ, որ որեւէ լրացուցիչ քննություն չէր անցկացվել վատ վերաբերմունքի մասով իր պնդման

վերաբերյալ, որովհետև նա ցանկացած պարագայում փոխհատուցման հավակնելու իրավունք չէր ունենա:

57. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը պարտադրում է դիմումատուներին նախ օգտագործել իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք սովորաբար հասանելի են եւ բավարար ներպետական իրավական համակարգում՝ ենթադրյալ խախտումների դիմաց նրանց փոխհատուցում ստանալու հնարավորություն տալու համար (տե՛ս *Դեմոպուլոսը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [ՄՊ] [*Demopoulos and Others v. Turkey* (dec.) [GC]], թիվ 46113/99 եւ այլն, ՄԻԵԴ 2010): Իրավական պաշտպանության այդպիսի միջոցների առկայությունը պետք է ոչ միայն տեսականորեն, այլ նաեւ գործնականում բավարար չափով որոշակի լինի, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցնի մատչելիության եւ արդյունավետության անհրաժեշտ մակարդակի բացակայության (տե՛ս, *Պակասան ընդդեմ Լիտվայի* [ՄՊ] [*Paksas v. Lithuania* [GC]], թիվ 34932/04, § 75, ՄԻԵԴ 2011 (քաղվածքներ)): Կառավարությունը, որը պնդում է չսպառելու մասին, պարտավորվում է Դատարանում ապացուցել, որ իրավական պաշտպանության այդ միջոցը եղել է արդյունավետ, տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի, այսինքն՝ այն հասանելի է եղել, դրա միջոցով հնարավոր է եղել դիմումատուի բողոքների մասով փոխհատուցում տրամադրել, ինչպես նաեւ դրանով ընձեռվել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար (տե՛ս *Քենեդին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Kennedy v. the United Kingdom*], թիվ 26839/05, § 109, 2010 թվականի մայիսի 18): Ապացուցման պարտականությունը կատարելուց հետո դիմումատուի վրա է դրվում այն փաստը հաստատելու պարտականությունը, որ Կառավարության կողմից առաջարկվող իրավական պաշտպանության միջոցը, ըստ էության, սպառված է եղել կամ որոշ պատճառներով գործի կոնկրետ հանգամանքներում եղել է ոչ պատշաճ եւ անարդյունավետ (տե՛ս Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ] [*Selmouni v. France* [GC]], թիվ 25803/94, § 76, ՄԻԵԴ 1999-V):

58. Դատարանը նաեւ վերահաստատում է, որ այն դեպքում, երբ ի սկզբանե պարզ է, որ դիմումատուին հասանելի չէ որեւէ արդյունավետ իրավական պաշտպանության միջոց, վեցամսյա ժամկետը սկսվում է այն արարքների կամ միջոցառումների օրվանից, որոնց վերաբերյալ ներկայացվում է բողոք, կամ այդ արարքի, դրա ազդեցության կամ դիմումատուին հասցվող վնասի մասին տեղեկանալու օրվանից (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վարնավան եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Varnava and Others v. Turkey* [GC]], թիվ 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 եւ 16073/90, § 157, ՄԻԵԴ 2009): Երբ դիմումատուն օգտվում է իրավական պաշտպանության ակնհայտորեն առկա միջոցից եւ միայն հետագայում է տեղեկանում այն հանգամանքների մասին, որոնք այդ միջոցը դարձնում են անարդյունավետ, վեցամսյա ժամկետն ավելի նպատակահարմար է հաշվարկել այն օրվանից սկսած, երբ դիմումատուն առաջին անգամ տեղեկացել կամ պետք է տեղեկացած լիներ այդ հանգամանքների մասին (նույն տեղում՝ § 158):

59. Սույն գործում դիմումատուն իր դեմ քրեական գործով քննության ընթացքում պնդել է, որ ենթադրյալ տուժողների, մասնավորապես՝ ճանապարհային ոստիկանության ծառայողներ Վ.Ս.-ի եւ Գ.Գ.-ի կողմից ենթարկվել է վատ վերաբերմունքի: Նրա պնդումները մերժվել են իր քրեական գործը քննող քննիչի կողմից 2005 թվականի հունիսի 21-ին ընդունված որոշման մեջ, որը վերնագրված է «Որոշում քրեական գործի մասը կարճելու եւ քրեական հետապնդում չիրականացնելու մասին» (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը): Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն կարող էր ՔԴՕ 263-րդ եւ 290-րդ հոդվածների հիման վրա վիճարկել քննիչի որոշումը, ինչը նա չի արել: Ներպետական դատարաններն իրենց հերթին գտել են, որ դիմումատուն բաց է թողել ՔԴՕ 21-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 290-րդ հոդվածով սահմանված՝ բողոքարկման ժամկետները (տե՛ս վերելում՝ 24-րդ եւ 26-րդ պարբերությունները):

60. Դատարանը նշում է, որ իրավական պաշտպանության այս միջոցների՝ տեսականորեն, ինչպես նաեւ գործնականում բավարար չափով որոշակի լինելը

կասկածահարույց է: Այն ընդգծում է, որ նշված երեք հոդվածներից յուրաքանչյուրով սահմանվում է տարբեր ժամկետներ (տե՛ս վերելում՝ 39-րդ, 46-րդ եւ 47-րդ պարբերությունները), եւ ենթադրելով, որ բոլոր երեքը կիրառելի էին դիմումատուի գործով, սա պետք է որ անխուսափելիորեն շփոթմունք առաջացներ դատավարական կանոններին հետեւելիս: Ուստի չի կարելի ասել, ոչ դիմումատուն իր տրամադրության տակ ուներ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ընդդեմ քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշման:

61. Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ քննիչի որոշումից հետո՝ 2006 թվականի փետրվարի 16-ին, առաջին ատյանի դատարանը, քննելով դիմումատուի քրեական գործը, գտել է, որ դիմումատուի հանդեպ վատ վերաբերմունքի փաստը հաստատված է, իսկ քննիչի որոշումը՝ անհիմն, եւ դիմել գլխավոր դատախազին՝ ոստիկանության ծառայողների դեմ ՔՕ համապատասխան դրույթի հիման վրա քրեական գործ հարուցելու պահանջով (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը): Սա կարող է դիտվել որպես առաջին քայլ դիմումատուի՝ [իր հանդեպ] վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների մասով նոր քննություն սկսելու ուղղությամբ: Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ բողոք ներկայացնելու արդյունքում այդ որոշումը 2006 թվականի նոյեմբերի 12-ին բեկանվել է Վերաքննիչ քրեական դատարանի կողմից, որը, ընդունելով դիմումատուի հանդեպ վատ վերաբերմունքի փաստը, այնուամենայնիվ, մերժել է այդ փաստի առթիվ քննություն անցկացնելու պահանջով դիմելը եւ փոխարենը կիրառել է քրեական գործով վարույթը վերսկսելու վերաբերյալ դրույթները ու գտել, որ վերսկսման հնարավորությունն արգելվում է ՔԴՕ 21-րդ հոդվածով (տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը): Դիմումատուն վճռաբեկ բողոք չի ներկայացրել դատավճռի դեմ, ինչպես նաեւ չի դիմել Դատարան այդ դատավճռի կայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում՝ ենթադրելով, որ նման բողոքը իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չէ. փոխարենը նա փորձել է այդ հարցը եւս մեկ անգամ բարձրացնել դատարաններում՝ օգտագործելով հաջողության հասնելու

հեռանկարներ չունեցող մի ընթացակարգ (տե՛ս վերելում՝ 22-28-րդ պարբերությունները): Սակայն այդ փուլում՝ ամենաուշը 2006 թվականի նոյեմբերի 12-ից ի վեր, դիմումատուի համար պետք է պարզ լիներ, որ այլևս որեւէ լրացուցիչ քննություն չէր անցկացվելու իր՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների մասով, իսկ նույն հարցով դատարաններ դիմելու ցանկացած նոր փորձ լինելու էր ապարդյուն: Ուստի Դատարանը չի կարող հաշվի առնել դիմումատուի կողմից 2007 թվականի նոյեմբերի 27-ին հարուցված վարույթը՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

62. Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից 2007 թվականի սեպտեմբերի 11-ին եւ 2009 թվականի փետրվարի 26-ին ներկայացված երկու քաղաքացիական հայցերին, ապա այստեղ Դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ Կառավարության՝ այդպիսի պահանջների՝ հաջողության հասնելու հեռանկարներ չունենալու վերաբերյալ փաստարկներին՝ հետեւյալ պատճառներով: Այն վերահաստատում է, որ պետական պաշտոնատար անձանց կողմից ուժի ապօրինի կիրառման ոլորտում՝ ոչ միայն զանցանքի, անգործության կամ անփութության դեպքում, քաղաքացիական կամ վարչական վարույթները, որոնք ավելի շատ նպատակ են հետապնդում միայն փոխհատուցում տրամադրելու, այլ ոչ թե ապահովելու պատասխանատու անձանց բացահայտումն ու պատիժը, չեն համարվում իրավական պաշտպանության պատշաճ եւ արդյունավետ միջոցներ, որոնք կարող են տրամադրել փոխհատուցում՝ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների նյութաիրավական ասպեկտների հիման վրա ներկայացված բողոքների համար (տե՛ս *Մոկանուն եւ այլք ընդդեմ Ռումինիայի* [ՄԴ] [*Mocanu and Others v. Romania* [GC]], թիվ 10865/09 եւ մյուս երկուսը, § 227, ՄԻԵԴ 2014 (քաղվածքներ) եւ *Ջորգենսենը եւ այլք ընդդեմ Դանիայի* (որոշում) [*Jørgensen and Others v. Denmark* (dec.)], թիվ 30173/12, 2016 թվականի հունիսի 28): Սրանից հետեւում է, որ դիմումատուի կողմից ներկայացված քաղաքացիական հայցերը գործի հատուկ

հանգամանքներում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ չէին՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն բերված նրա հիմնական բողոքի համար:

63. Ելնելով վերոնշյալից՝ Դատարանը եզրակացնում է, որ Վերաքննիչ քրեական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ներպետական վերջնական որոշումն է: Հետեւաբար, իր գանգատը ներկայացնելով 2009 թվականի մարտի 23-ին, դիմումատուն չի պահպանել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետն այնքանով, որքանով դա վերաբերելի է 3-րդ հոդվածի նյութաիրավական եւ դատավարական ասպեկտներին:

64. Սրանից հետեւում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

65. Դիմումատուն բողոքել է, որ ոստիկանության ծառայողների կողմից իր հանդեպ վատ վերաբերմունքի արդյունքում կրած ոչ նյութական վնասի դիմաց որեւէ փոխհատուցում իրեն հասանելի չի եղել Հայաստանի օրենսդրության համաձայն: Նա հիմնվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վրա, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Ա. Ընդունելիությունը

66. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

67. Դիմումատուն նշել է, որ իր դեպքում 13-րդ հոդվածը խախտվել է, քանի որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում փոխհատուցում պահանջելու հնարավորություն՝ վատ վերաբերմունքի արդյունքում կրած որեւէ ոչ նյութական վնասի դիմաց: Նա պնդել է, որ 13-րդ հոդվածը կիրառելու համար բավարար էր ներկայացնել Կոնվենցիայի տեսանկյունից փաստարկելի պնդում: Ուստի, նույնիսկ եթե քննիչը որոշեր քրեական հետապնդում չիրականացնել ոստիկանության ծառայողների նկատմամբ 2005 թվականի հունիսի 21-ի իր որոշմամբ, իր հանդեպ վատ վերաբերմունքի եւ ոստիկանության գործողությունների անօրինականության փաստը միանշանակորեն հաստատվել էր Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի 2006 թվականի փետրվարի 16-ի դատավճռով եւ ավելի բարձր ատյանի դատարանների կողմից: Ուստի նա քաղաքացիական դատարաններին ներկայացրել է փաստարկելի պնդում՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ: Սակայն ոչ նյութական վնասի համար փոխհատուցման իր քաղաքացիական հայցը մերժվել է, քանի որ ներպետական օրենսդրությամբ նման փոխհատուցում չի նախատեսվում:

68. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն ունեցել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց իր հանդեպ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների մասով, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածով: Ներպետական օրենսդրությունը հնարավորություն է ընձեռել ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում հաստատելու ոստիկանության ծառայողների կողմից նրա հանդեպ վատ վերաբերմունքի փաստը, եւ հետեւաբար պահանջելու եւ ստանալու փոխհատուցում: Սակայն դիմումատուն չի օգտվել այդ հնարավորությունից՝ ժամանակին չներկայացնելով բողոք քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշման դեմ: Ուստի դիմումատուի հանդեպ ենթադրյալ վատ վերաբերմունքի մասով ներպետական վերջնական որոշումը 2005 թվականի հունիսի 21-ի որոշումն է, համաձայն որի՝ ոստիկանության ծառայողների

գործողությունները համարվել են օրինական, եւ ուստի նրա քաղաքացիական հայցերը չեն ունեցել հաջողության հասնելու հեռանկարներ: Ըստ այդմ, համապատասխան մարմնի կողմից դիմումատուի՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում չհայտնաբերելու պարագայում նա, համաձայն 13-րդ հոդվածի, չի ունեցել «փաստարկելի պնդում» իր հանդեպ վատ վերաբերմունքի պնդումների մասով:

69. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի մեկ այլ դրույթի փաստացի խախտման առկայությունը 13-րդ հոդվածի կիրառման նախապայման չէ: 13-րդ հոդվածը երաշխավորում է իրավական պաշտպանության միջոցների հասանելիությունն ազգային մակարդակում՝ կոնվենցիոն իրավունքների եւ ազատությունների էությունը կիրառելու եւ ուստի դրանց չկատարումը ենթադրելու համար՝ անկախ նրանից, թե ինչ ձեւով են դրանք ապահովվում ներպետական իրավակարգում: Ուստի, որպեսզի 13-րդ հոդվածը կիրառվի, բավարար է, որ անձն ունենա Կոնվենցիայի տեսանկյունից «փաստարկելի պնդում» (տե՛ս *Բոյլը եւ Ռայսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Boyle and Rice v. the United Kingdom*], 1988 թվականի ապրիլի 27, § 52, շարք Ա թիվ 131, եւ *Պողոսյանը եւ Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի* [*Poghosyan and Baghdasaryan v. Armenia*], թիվ 22999/06, § 43, ՄԻԵԴ 2012):

70. Սույն գործում Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն հնարավորություն չի ունեցել վնասի դիմաց փոխհատուցում ստանալու, եւ նա չի ունեցել փաստարկելի պնդում, քանի որ նրա հանդեպ վատ վերաբերմունքի փաստը չի հաստատվել քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշմամբ, որը այդ հարցի մասով վերջնական որոշումն էր: Դատարանն այս առնչությամբ նշում է, որ ներպետական օրենսդրության մեջ որեւէ բան թերեւս ինքնըստինքյան չի զրկել դիմումատուի քաղաքացիական հայցերը հաջողության հասնելու որեւէ հեռանկարից՝ ուստիկանության ծառայողների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու պայմաններում: Ավելին, Կառավարության փաստարկը հակասում է գործի հանգամանքներին եւ ներպետական դատարանների եզրահանգումներին: Մասնավորապես, ինչպես արդեն վերը նշվել է, նույնիսկ եթե

նստիկանության ծառայողների գործողությունների մասով երբեւէ քրեական հետապնդում չիրականացվեր, եւ հետեւաբար ներպետական դատարանները նրանց դեմ գործում երբեւէ չհաստատեին դիմումատուի հանդեպ վատ վերաբերմունքի փաստը, դիմումատուի գործով դատական քննության ընթացքում դատարանները հաստատված են համարել, որ նստիկանության ծառայողները բռնություն են գործադրել դիմումատուի նկատմամբ եւ ծեծել նրան՝ պատճառելով լուրջ վնասվածքներ եւ վնաս: Համարվել է, որ դիմումատուն գործել է պաշտպանության վիճակում, իսկ քննիչի՝ նստիկանության ծառայողների գործողություններն օրինական բնութագրող որոշումը համարվել է անհիմն (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը): Համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի՝ այդ եզրահանգումները պարտադիր էին քաղաքացիական դատարանների համար (տե՛ս վերելում՝ 48-րդ պարբերությունը), մինչդեռ Քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածով նախատեսվում էր, որ պետությունը պատասխանատվություն է կրում պետական մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց ցանկացած «ապօրինի գործողության» համար (տե՛ս վերելում՝ 52-րդ պարբերությունը): Հատկանշական է, որ դիմումատուի որեւէ քաղաքացիական հայց չի մերժվել դատարանների կողմից՝ Կառավարության կողմից նշված պատճառներով: Նրա՝ ոչ նյութական վնասի փոխհատուցման մասով հայցը մերժվել էր այն հիմքով, որ ներպետական օրենսդրությամբ նման տեսակի փոխհատուցում չէր նախատեսվում, մինչդեռ նրա՝ նյութական վնասի փոխհատուցման մասով հայցը մերժվել էր, քանի որ դատարանները չէին գտել որեւէ պատճառահետեւանքային կապ վատ վերաբերմունքի եւ դիմումատուի կողմից պահանջվող կոնկրետ բժշկական ծախսերի միջեւ (տե՛ս վերելում՝ 30-րդ, 32-րդ եւ 35-րդ պարբերությունները): Ավելին, վերոնշյալ վարույթի շրջանակներում առաջին ատյանի դատարանը հստակ նշել է, որ դիմումատուն վնասի մասով ծանրակշիռ փաստարկներ ունի Քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ հաշվի առնելով նստիկանության ծառայողների գործողությունների ապօրինի լինելու փաստը (տե՛ս վերելում՝ 35-րդ պարբերությունը):

71. Ելնելով վերոնշյալից՝ Դատարանը եզրակացնում է, որ, հաշվի առնելով դիմումատուի գործով դատական քննության ընթացքում դատարանների կողմից ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ արված եզրահանգումները, դիմումատուն 13-րդ հոդվածի իմաստով ունեցել է «փաստարկելի պնդում»՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի ենթարկվելու մասով (տե՛ս *mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով)*, Պողոսյանը եւ Բաղդասարյանը, վերետում հիշատակված, § 44): Ուստի նա պետք է ունենար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ներպետական դատարաններում: Այս առնչությամբ դիմումատուի հիմնական բողոքն այն է, որ ՀՀ օրենսդրության համաձայն տվյալ ժամանակահատվածում նրան հասանելի չի եղել փոխհատուցում՝ իր հանդեպ ենթադրյալ վատ վերաբերմունքի մասով նյութական բնույթի վնասների դիմաց: Դատարանը նշում է, որ համանման հանգամանքներում այն արդեն եզրակացրել է, որ ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում ՀՀ օրենսդրությամբ հասանելի չլինելու հետեանքով խախտվում են Կոնվենցիայի 13-րդ հոդվածի երաշխիքները (նույն տեղում՝ §§ 45-48): Սույն գործում այդ եզրակացությունից շեղում կատարելու պատճառներ չկան:

72. Հետեաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

73. Դիմումատուն բողոքել է, որ ՀՀ օրենսդրությամբ իրեն հասանելի չի եղել ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում՝ իր ապօրինի ձերբակալության եւ կալանավորման մասով: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի վրա, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

74. Կողմերը չեն ներկայացրել որեւէ դիտարկում դիմումատուի կողմից բերված բողոքի մասով:

Ա. Ընդունելիությունը

75. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

76. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները համարվում են կատարված, եթե հնարավոր է դիմել փոխհատուցում ստանալու համար՝ 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերին հակասող պայմաններում իրականացված ազատագրկման մասով: Ուստի 5-րդ կետով սահմանված փոխհատուցման իրավունքը ենթադրում է, որ մյուս կետերից որեւէ մեկի խախտումը հաստատվել է կամ ներպետական մարմնի կամ Դատարանի կողմից (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ն.Ս.-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*N.C. v. Italy* [GC]], թիվ 24952/94, § 49, ՄԻԵԴ 2002-Ճ): Ավելին, 5-րդ հոդվածի 5-րդ կետը չպետք է մեկնաբանվի որպես զուտ նյութական բնույթ ունեցող փոխհատուցման իրավունք տրամադրող, այլ պետք է դրանով տրամադրվի նաեւ այդպիսի իրավունք՝ ցանկացած տազնապի, անհանգստության եւ հիասթափության համար, որն անձը կարող է ապրել 5-րդ հոդվածի մյուս դրույթների խախտման հետեւանքով (տե՛ս *Խաչատրյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* [*Khachatryan and Others v. Armenia*], թիվ 23978/06, § 157, 2012 թվականի նոյեմբերի 27, եւ Սահակյանն ընդդեմ Հայաստանի [*Sahakyan v. Armenia*], թիվ 66256/11, § 29, 2015 թվականի նոյեմբերի 10):

77. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ դիմումատուին արդարացնելիս առաջին ատյանի դատարանը գտել է, որ նրա ձերբակալությունն իրականացվել է ապօրինի կերպով, իսկ կալանավորումը եղել է անհիմն (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը): Ուստի կարելի է ասել, որ դիմումատուի ազատազրկումն ըստ էության համարվել է 5-րդ հոդվածի դրույթների խախտում, հետեւաբար 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է դիմումատուի գործով: Նրա՝ ոչ նյութական վնասի հատուցման մասով քաղաքացիական հայցը, այնուամենայնիվ, մերժվել է ներպետական դատարանների կողմից այն հիմքով, որ Հայաստանի օրենսդրությունը «ոչ նյութական վնասների փոխհատուցումը» որպես փոխհատուցման տեսակ չի նախատեսում:

78. Դատարանն արդեն արձանագրել է, որ համաձայն Հայաստանի օրենսդրության՝ ոչ նյութական բնույթի վնասի դիմաց փոխհատուցման անհասանելիությունը խախտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի երաշխիքները (տե՛ս վերելում՝ *Խաչատրյանը եւ այլք* գործը՝ վերելում հիշատակված, §§ 158-159, եւ *Սահակյանի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 30-32): Սույն գործում այդ եզրակացությունից շեղում կատարելու պատճառներ չկան: Սրանից հետեւում է, որ դիմումատուն օրենքով կամ գործնականում չի օգտվել այդ հոդվածի իմաստով՝ հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունքից:

79. Հետեւաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

80. Դիմումատուն բողոքել է, որ համաձայն Հայաստանի օրենսդրության՝ իրեն հասանելի չի եղել իր երկու դատապարտումներին առնչվող որեւէ

ոչ նյութական վնասի փոխհատուցում: Նա հիմնվել է Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի վրա, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Եթե որեւէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, եւ եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որեւէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետեւանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից»:

81. Կառավարությունը պնդել է, որ Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի չէ դիմումատուի գործով, քանի որ նրա՝ 1983 եւ 1988 թվականների դատապարտումները բեկանվել են ոչ թե «նոր կամ նոր երեսան եկած փաստի» հիմքով, այլ վերահսկողական վերանայման ընթացակարգի միջոցով՝ առկա ապացույցների վերագնահատման հիմքով:

82. Դիմումատուն պնդել է, որ նա դատապարտվել է վերջնական դատավճիռների համաձայն եւ կրել պատիժ իր դատապարտումների արդյունքում: Այդ դատավճիռները բեկանելիս Վճռաբեկ դատարանն ընդունել է, որ դատական գործընթացում տեղի է ունեցել լուրջ խախտում, որը լուրջ վնաս է հասցրել նրան՝ որպես դատապարտված անձի:

83. Դատարանը հաստատում է, որ Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի է այն գործերի նկատմամբ, որոնցով վերջնական մեղադրական դատավճիռը բեկանվել է նոր կամ նոր երեսան եկած որեւէ փաստի հիմքով, որը ցույց է տալիս, որ տեղի է ունեցել արդարադատության սխալ իրականացում, այլ ոչ թե այն դեպքերում, երբ նման մեղադրական դատավճիռը բեկանվել է քրեական գործով ապացույցների նոր քննության պատճառով (տե՛ս *Մապվեեն ընդդեմ Ռուսաստանի* [Matveyev v. Russia], թիվ 26601/02, §§ 40-45, 2008 թվականի հուլիսի 3):

84. Սույն գործում դիմումատուի՝ 1983 եւ 1988 թվականներին կայացված մեղադրական դատավճիռները բեկանվել են գլխավոր դատախազի լրացուցիչ բողոքից հետո: Այդպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանցակազմը բացակայում է, քանի որ դիմումատուի մեղքը հիմնավորող ապացույցներ չկային, իսկ վիճարկվող դատավճիռները հիմնված են եղել ենթադրությունների եւ օրենքի սխալ մեկնաբանության վրա (տե՛ս վերելում՝ 7-րդ պարբերությունը): Հետեւաբար, դիմումատուի մեղադրական դատավճիռները բեկանվել են ոչ թե «նոր կամ նոր երեւան եկած որեւէ փաստի» հիմքով, այլ Վճռաբեկ դատարանի կողմից դիմումատուի դեմ քրեական վարույթում օգտագործված ապացույցների վերագնահատման հետեւանքով: Դիմումատուն նույնպես չի պնդել, որ իր մեղադրական դատավճիռները բեկանվել են «նոր կամ նոր երեւան եկած որեւէ փաստի» հիմքով: Նման հանգամանքներում Դատարանը համարում է, որ Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառելիության պայմանները չեն պահպանվել:

85. Սրանից հետեւում է, որ սույն բողոքը 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով Կոնվենցիայի դրույթների հետ *ratione materiae* (առարկայական ընդդատության առումով) անհամատեղելի է:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

86. Ի վերջո, դիմումատուն ներկայացրել է մի շարք այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի եւ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով:

87. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը եւ այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են դրա իրավասության շրջանակներում, Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ դեպք: Սրանից հետեւում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի:

VI. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**88. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝**

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

89. Դիմումատուն պահանջել է ընդհանուր 145 881 եվրո՝ իր անօրինական դատապարտումների արդյունքում ենթադրաբար կրած նյութական վնասի դիմաց: Նա նաեւ պահանջել է ընդհանուր 481 000 եվրո՝ իր հանդեպ վատ վերաբերմունքի, իրեն ազատությունից անօրինական զրկելու եւ անօրինական դատապարտումների արդյունքում կրած ոչ նյութական վնասի դիմաց:

90. Կառավարությունը նշել է, որ ենթադրյալ խախտումների եւ պահանջված նյութական վնասի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ չկա: Ինչ վերաբերում է անօրինական դատապարտումների արդյունքում կրած ոչ նյութական վնասի մասով պահանջին, այն անհիմն է, քանի որ Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի չէր դիմումատուի գործի նկատմամբ: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի մասով նրա մնացած պահանջներին, ապա դրանք չհիմնավորված էին եւ չափազանցված:

91. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտումների եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ. հետեւաբար, այն մերժում է այս պահանջը: Մյուս կողմից, այն դիմումատուին շնորհում է 11 700 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

92. Դիմումատուն նաեւ պահանջել է 6 500 եվրո՝ Դատարանում իր երկու հաջորդական ներկայացուցիչներին վճարված գումարների համար: Նա ներկայացրել է իր առաջին իրավաբանի հետ կնքած պայմանագիրը, համաձայն որի՝ նա պարտավորվում է վճարել 3 000 եվրո գումար՝ գործի հաջող ելքի դեպքում:

93. Կառավարությունն առարկել է այդ պահանջի դեմ: Առաջին հերթին՝ դիմումատուի բողոքների մեծ մասն ընդունելի չէին, ուստի պահանջվող գումարը պետք է նվազեցվեր: Երկրորդ՝ դիմումատուն իրականում որեւէ ծախս չի կրել, քանի որ նա որեւէ վճարում չի կատարել իր իրավաբանին: Երրորդ՝ դիմումատուի կողմից իր երկրորդ իրավաբանի մասով պահանջված 3 500 եվրոն հիմնավորված չէր որեւէ ապացույցով:

94. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք միայն այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործում դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթային ապացույցները միայն վերաբերել են 3 000 եվրո գումարին: Ուստի դիմումատուի պահանջի մնացած մասը չի հիմնավորվել որեւէ ապացույցով եւ պետք է մերժվի: Ինչ վերաբերում է պայմանագրի համաձայն վճարման ենթակա 3 000 եվրոյին, Դատարանը նախկինում մերժել է Կառավարության նմանատիպ առարկությունը (տե՛ս *Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* [*Saghatelyan v. Armenia*], թիվ 7984/06, §§ 61-63, 2015 թվականի հոկտեմբերի 20): Մյուս կողմից, փաստաբանին վճարված գումարները փոխհատուցվում են այնքանով, որքանով դրանք առնչվում են բացահայտված խախտմանը (տե՛ս *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* (արդարացի փոխհատուցում) [*ՄՊ*] [*Beyeler v. Italy (just satisfaction)*] [GC]), թիվ 33202/96, § 27, 2002 թվականի մայիսի 28): Դատարանը նշում է, որ դիմումատուի բողոքների մեծ մասը հայտարարվել են անընդունելի: Հետեւաբար, դիմումատուի կողմից պահանջված՝ փաստաբանին վճարված գումարները

չեն կարող ամբողջությամբ շնորհվել: Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերոնշյալ չափանիշը՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 500 եվրո՝ որպես այս մասով կրած ծախսերի փոխհատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

95. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կես:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի եւ 13-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքն ընդունելի, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

4. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 11 700 եվրո (տասնմեկ հազար յոթ հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 500 եվրո (հինգ հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի մարտի 15-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Քարտուղար

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս

Նախագահ